

## Տեղեկատվություն

<<Դիլիջան>> ԱՊ >>ՊՈԱԿ-ի 2015թ-ի հունվար-փետրվար ամսիսների կատարված  
Աշխատանքները

Ա/թ-ի փետրվարի 20-ին կայացավ ՀՀ բնապահպանության նախարար պարոն Ա.Գրիգորյանի այցը <<Դիլիջան>>ազգային պարկ ՊՈԱԿ:Վարչական շենքում կայացած հանդիպում-խորըրդակցության ժամանակ քննարկվեցին կազմակերպության աշխատակիցներին հուզող մի շարք հարցեր:

Ազգային պարկերի և արգելոցների օրվա կապակցությամբ բարեխիղճ աշխատանքային գործունեության համար նախարարը պատվոգրով պարգևատրեց կազմակերպության տնօրեն Ս.Մուրադյանին, երկարամյա բարեխիղճ աշխատանքային գործունեության համար՝ գլխ. հաշվապահ Հ.Հարությունյանին և որսագետ Ս. Սարգսյանին:

2015թ-ի հունվար-փետրվար ամսիսներին պահպանության բաժնի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է ապօրինի հատված 70 ծառ, որոնց համար կազմվել է 10 անտառխախտման արձանագրություն որոնք ուղարկվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժնի՝ ընթացք տալու: <<Դիլիջան>> ազգային պարկ-ի առավելագույնս դժվար պահպանվող տարածքներում պահպանության բաժնի և մասնաճյուղերի աշխատակիցների ուժերով կազմակերպվել են հերթապահություններ: ԱՊ-ի <<Հաղարծին տեղամաս>> մասնաճյուղի աշխատակիցների ուժերով մասնաճյուղի տարածքում վերանորոգվել է 8 հատ ուղղեփակոցներ:

Հունվար, փետրվար ամսիսներին գիտական բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել է <<Դիլիջան>> ազգային պարկի բույսերի և կենդանիների տնտեսական արժեքավոր տեսակների պոպուլացիաների, բույսերի համակեցությունների գերիշխող տեսակների բացահայտման , ուսումնասիրություններ, վայրի պտղատուների հիմնական տեսակների /հաճարի, կաղնի, բոխի/ ֆենոլոգիայի ուսումնասիրություններ: Անտառկազմող ծառատեսակների համար կատարվել են համապատասխան գրառումներ: Հունվար ամսին կազմվել է <<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի 2014թվականի կատարված աշխատանքների տարեկան հաշվետվությունը , փետրվարին այն ներկայացվել է ՀՀ բնապահպանության նախարարություն: Նշված հաշվետվության քննարկումը կկայանա մարտ ամսին:Շարունակվում են են 2015-2019թթ-ի Կառավարման պլանի նախագի մշակման աշխատանքները:

Բաժիններում քննարկվել են ԱՊ-ի 2015թ-ի Աշխատանքային պլան-ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումը :